



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ԹՈՎՄԱՍ ԱԳՈՒԼՅԵՒՆ ԵՎ ՆՐԱ ՄԵՌՈՆԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ*

42. Նոյն իւր ի գլուխ Սամուէլի լինի հեղեալ
Ժառանգութեան տեառըն իշխող դէտ կացուցեալ.
Դաւիթ իւրով քերամով զայս խոստովանեալ
Թէ տէր էօծ զիս [այս] իւղով սրբբով օծեալ:

43. ԸզՍողոմոն իւղիս լինի թագաւորեալ
Եւ ի շնորհացըն¹ հանճարով լինի լըցեալ.
Նիթականաւ առ ի գլուխըն լինի օծեալ,
Զանճիւթն ի սիրտն և ի խորհուրդն տըպաւորեալ:

44. Նայսըմ իւղում խորհուրդ քազում է պարփակեալ
Զոր ասասցուք² կարճ ի կարճոյ զխօսս ծանուցեալ.
Պարտ էր ընդ այս յայտնեալ քանի աղերս³ կըցեալ,
Զի մեք եւս եմք շնորհաց իւղոյս յոյժ փափագեալ:

Այստեղեւն օրհնութեամբ եւ խնդրուածովք գոհասցուք

45. Այն յառաջ նախ [ի] շըրջիլ [սուրբ] հոգոյդ գըզեալ
Հեղ եւ յիւղըս այս միթական յանճիւթ ծորեալ,
Եւ ի հեղույ շնորհաց⁴ հոգոյդ յիւղս այս սըրբեալ
Հան եւ ինձ մասն օծումն հոգոյս զի եմ պաւքեալ:

46. Այն փըշմանէդ որ նախափօրն հոգի շնորհեալ
Հեղ եւ յիւղս այս հոգի շնորհաց քոց զարդարեալ,
Եւ գլորմանէն որ Եւայիւ եղև գըթեալ,
Մատո՛ մատ քո յիւղըս⁵ շնորհօք դարձեալ կանգնեալ:

47. Այնըմ շնորհօք որ քարշեցեր զԵնոթն ընտրեալ
Հեղ վերըստին յիւղս այս միթոյ շնորհագարդեալ,
Եւ զիս ձըգեա սիրով հոգոյդ առ քեզ պըղնդեալ,
Զի մի՛ մնացայց յերերմանի եւ խանգարեալ:

* Ծարուհակված «Էջմիածին» ամսագրի № 10-ից:

¹ Զեռ. շնրհնց:

² Զեռ. գորասցք:

³ Զեռ. աղրես:

⁴ Զեռ. հնրհնց:

⁵ Զեռ. յղս:

48. Այն կենդանի փայտին որ Նոյ եղև փըրկեալ
Ջրգեա՝ ընդ նոյն փայտ նըշանիդ յիդս այս կազմեալ.
Եւ ի ձրգել անցնիք նշանիդ ըսքանչացեալ
Ջերծոյ զ[1]իմարս ի ջրոյ սուզ!.....
49. Այն հընչակիր² հողմով հոգոյդ լեզուս սըստեալ,
Եւ ի շինում ամբարտաւան³ զոր բաժանեալ,
Հեղ հոգի հրոյ ի շինումս այ[ս] իղաւորեալ
Այս աշտարակ որով ձրգիմք առ քեզ քարձեալ:
50. Այն նախատիպ միւթք այս... սըրբեալ
Հե՛ղ եւ յիդս այս որ հեղեր անդ կողէդ բըղխեալ,
Եւ ի միւթիլ իմանալեալդ միւթ այս մածեալ
Հա՛ն եւ ինձ մասն զովացուցչացն դէմ տապալկեալ:
51. Այնքմ սիրոյ որ է ընդ քեզ գօտեմարտեալ
Եւ դուռն դրանց արքայութեան կըրկին ծեփեալ
Հա՛յց իղլս այս եւ լըրացո՝ ըսքանչացեալ եւ զարդարեալ,
Եւ ինձ հիգոյս շնորհեա՝ կաթ մի վերնոյդ ցողեալ:
52. Այն ճարպ իղոյն որ ոչ խոստեալ հնոյն աւանդեալ,
Այլ որոշիր⁴ միայն վեհիդ պտուղ բոլորեալ,
Սոյն իդ նոյն տիպ ձրգեա ըզհուր հրաշակերտեալ
Ջի լիցուք⁵ մեք այսու շնորհիւ առըզմայլեալ:
53. Այն իդ հեղիկ Ահարոնեան գըլուխ օծեալ
Ջոր կարգ առ կարգ մինչ ի գրապանս լինիր հասեալ,
Լի՛ց այնմ շնորհիւ քոյ օրհնութեամբ յերկրէ զեղեալ
Այժմ առ պատրաստ ծառայակցացդ լիով հեղեալ:
54. Այն ի ձրգել աջն Մովսէսի ջըրոյն կըտեալ,
Եւ Իսրայէլ ի յանցանելն մըկըրտեցեալ,
Ջրգեա՝ ա՛յք քո նոյ[ն]ով հոգով յիդս այս ծորեալ⁶
Ջի մեք այսու շնորհօք առցուք զգիտ(?) վառեալ:
55. Այն տապանակ ըզՅորդանան լինի անցեալ,
Ցամար ոտիք զերկոտաւան վէմլս բարձեալ,
Նոյն զօրութեամբ լիցիմք հրաշիւք քո ըզգեցեալ
Բազմօք պետօքս ի իղլս այս հրաշագործեալ:
56. Այն որ Յեսուայ ետուր զգիտ(?) ձեռնադըրեալ
Հե՛ղ եւ նոյն շնորհ ի յիղլս այս լուսափայլեալ,
Որ ի սմանէ օծեալք լիցին և ձեռնադըրեալ,
Լիցին և քում հոգոյդ զգեցիկ լուսափայլեալ:
57. Այն մարգարէք եւ թագաւորք եղեալք օծեալ
Որք ի հոգոյդ իմաստութեամբ ծայրիւ սըրբեալ.
Հե՛ղ եւ շնորհաց իմանալին այն վառեցեալ.
Հե՛ղ եւ օծիմք իղիւս լուսոյ որ մեռոնեալ:

¹ Ձեռ. սուզուզման խորթեալ (?):

² Ձեռ. հընչակիր:

³ Ձեռ. ապրտան:

⁴ Ձեռ. որոշիր:

⁵ Ձեռ. զիցուք:

⁶ Ձեռ. ծրեալ:

58. Այն չորս սափորն որ ի ծովու էր կընքեցեալ,
Օրինակ սուրբ առաքելոցն սոյն թիւ լըցեալ,
Եւ ի գոչելըն Եղիայի առ տէրոյ բարձրեալ,
Եւ ի լսել հրով մաքրեալ միւթոցն ողջակիզեալ:

59. Արա՛ դու, տէր, գալ նոյն հոգոյն իղս այս մածեալ,
Սըրբելով սա հեղուլ ըզշնորհոյ զանազանեալ,
Նոյն զօրութեամբ արկ հողմն հոգոյի իղս այս բուծեալ,
Լիցիմք ցողովդ եւ սուրբ հոգովդ մըկըրտեցեալ:

60. Սոյն իւղ անշնորհ մաշկեակն ի գլուխ ջըրոյն ծալեալ,
Եւ Եղիսէ զԵղիայէ զհոգին խընդրեալ.
Հե՛ղ եւ իղս այս այնըմ հոգոյ զըրազարդեալ
Ձի մաքրիցիմք յաղտոյ հընոյն լրացեցեալ:

61. Այն օրինակ զոր Եղիա վեր վերացեալ
Իմանալեան իղս ունի այս նոյն հանդերձեալ,
Ջոր ի յետնումըն աւուր երբ լիցիմք կոչեալ
Ջարթուցանէ սա առ յերկինս ոսկ մեզ ցուցեալ:

62. Առ այս խորհուրդ իւղ[ըն] այրոյն լիցի ցուցեալ,
Անդ միւթ ունէր որ աստ լիցի շնորհիւ աճեալ.
Եւ առ մեռեալն ըզկից կըլաչովն կըծկեցուցեալ¹,
Նոյնոյ հոգովն լիցի մանուկն կենդանացեալ:

63. Այն շնորհայի իղաւտումն² պարուր արկեալ,
Եւ ի շընչել հոգոյի լիցի իղս պս լըցեալ.
Այն Եղեկիա առնոյր³ ի տեսնէ կեանս դարձեալ
Չէ այն շնորհացն խորհըրդէ օտարացեալ:

64. Ցանկալի այս օծումն վերնոյն եւ սպասեցեալ
Որ յօծանել յաչըս Դաւթայ եղև բացեալ.
Այն իւղ ունի որակ լեզույ յինքն առեցեալ
Որով լիցիմք սուրբք⁴ մաղձոյ մեղացն բնաւորեալ:

65. Այն մըկըրտումն Յուդայ առ սա գուշակեցեալ,
Որով հրաշիւք ըսպան հըսկայ հըպարտացեալ.
Սովիմքք օծեալ արա՛ յաղթող, տէր, զօրացեալ՝
Կոխել ըզգլուխ օձին մախնոյ ջախջախեցեալ:

66. Եւ հասանիլ շնորհաց իւղոյ վայրս որ լըքեալ,
Ցայմծամ լիցի հոգի չարին խոնարհեցեալ.
Ջոր սոյն շնորհէ չարքըն լիցին յերկրէ բարձեալ
867ա Եւ շնորհք իւղոյ սըրբոյ առ հեղքըն հանգուցեալ:

67. Արին Յուդա ընտրէ զօծեալս մինչ էր օծեալ
Ձի յօծմանէ տեսողն շնորհացն էր զօրացեալ.
Որք այս շնորհիւս զենան մինչև մահատակեալ
Ձի լիցիս մեզ շնորհիւ քոյով օժանդակեալ:

¹ Ձեռ. կծկեցուցեալ:

² Ձեռ. իւղ աւերումն:

³ Ձեռ. առնուր:

⁴ սրբք:

68. Առ այս շնորհիս մեծն և արին Յոք գորացեալ,
Եւ փորձութեանց չարին հոգոյ ոչ խեղդեցեալ.
Եւ ի Դաւիթ խընդրէ ի յաչս իւր այս փայլեալ,
Ի՛ այսու շնորհիս լինի ինքըն լուսաւորեալ:

69. Այն ձայնի տեառնդ որ ի ջուրըս ա[ւ]ս վրկայեալ
Եւ օծումըն իւղոյս ի գլուխս բացալայտեալ,
Սոյն շնորհօք զորըս արար զսոսա զմայլեալ
Ա՛րկ ի իւղս այս և ի ծառայքս քո նըքթեցեալ:

70. Լոյս տեառն ասէ սքմա ի շունչս մարդկան կըցեալ,
Եւ իւղ սուրբ [որ] անմեղութեան կաթէն բըղխեալ.
Բազմացն հեղեալ շնորհացըն որ ի հընոյն լեալ
Հե՛ղ եւ այսր ի մեռոնըս այս օրհնաբանեալ:

71. Այն շնորհիս իւղոյն որ շիշն գըլխոյդ բեկեալ,
Զի ի քէն էր եւ քեզ եղեւ քեւաւորեալ.
Ա՛ծ և շնորհս քո ի յիւղըս այս լուսաւորեալ
Զըզելով զիս առ շնորհըդ քո փառաւորեալ:

72. Իւղ անուշ եւ եւ անուն քո իւղով օծեալ,
Հաստատեալ՝ քեւ, զի լիցուք մեք քեւ՝ ընթացեալ.
Ծաղիկք բազումք նախնի իւղով սա գումարեալ
Եւ անուամբ տեառն ի միասին փառաւորեալ:

73. Այս իւղ աղբեր տեառն բըղխի փըրկաւտեալ,
Զուր օրհնութեան այն խնդրելոյ նըմանեցեալ.
Զի եւ մեք լիցուք շնորհիս սորին զըւարճացեալ
Նոյն օրհնութեամբ օրհնեալ զիւղս զայս զըւարթացեալ:

74. Յոգնադիմի զայս իւղ ի մորս ազնի ցուցեալ
Սիրտն ըզոգի եւ սըրբութեամբ ճոխացուցեալ
... մեր որք լինի սովաւ օծեցեալ
Հոգովըդ քո ձըզիմք առ քեզ կենդանացեալ:

75. Այն քաղցրահրաշ գոշումն ա՛րկ այսր ըսքանչացեալ,
Զի բուսուցէ զմեզ առ յօդեալըդ կացուցեալ,
Եւ կենդանի ջրոյդ շնորհաց որ ի քէն բըղխեալ
Լինիմք շնորհօք ի նընջմանէն կենդանացեալ:

76. Այն սուրբ մա[ւ]կանըն շնորհեցար հանճարեղեալ
Զա[ւ]րաստանիլըն Շուշանայ սովիմք յայտնեալ.
Զանպատմելի երազն շնորհօքդ բացալայտեալ
Զիւղոյս շնորհօք առնէ ... հին պայթուցեալ:

77. Այս իւղ քաղցրութեան ըստ Յովելեայ լերանց բըղխեալ,
Եւ ջուր հրաշակերտ ի ծընունդս տեառն վիճակեալ.
Սովաւ կանգնի տուն տեառն եւ զմարդըն տառապեալ,
Զի ձըզեսցէ ի վեր ըզփառսն երանեցեալ:

78. Գինի եւ իւղ վիրաց հընոյն ըսպեղանեալ,
Այս խորհրդով յեկեղեցի պանդոկ ածեալ.
Մանրեալն, բեկեալն այսու առնէ հըզօրացեալ
Եւ պաշտօնեալք տեառըն վերին ի Սիոն ածեալ:

¹ Զեռ. ի քեւ:

79. Այս խորհրդոյ անուն ... աղբիւր բղղխեալ
Եւ լրացումն մեղաւորաց պատրաստեցեալ.
Նոյն սքանչելեօք հայեա՝ դու, տէր, յիշս այս մարեալ,
Եւ լրա՝ զմեզ ի հնոյ մեղաց՝ անմեղացեալ:

80. Որ զԱմբորդին զխորհուրդ սորին բացայայտեալ
Ի ... հոգոյն սրբոյ մեզ առանդեալ.
Ըզնիթականն աննիթ անդրէն ձեացուցեալ
Զորոյ շնորհօք լինի յիշս այս լուսաւորեալ:

81. Աստ մոր հոգին լինի իւղըս այս կարացեալ,
Զըստներն՝ եւ լոյս ի միասին փայլեցուցեալ.
Նոյն շնորհիւ արա՝ իշս այս հրաշագարդեալ
Եւ ըզծառայքս սրբոյ հոգոյ տաճարացեալ:

82. Իիւղովս՝ հոգով եւ այլ շըրով ոք հանդերձեալ
Նըմա լինի արքայութեան դուռն բացեալ.
Զի մարմնոյ ծնունդն ի մարմնոյ է յառաջ եկեալ
Եւ ի իւղովս հոգին լինի հոգոյն ծընեալ:

83. Ի՝ ի Յիսուս շնորհաց տուողին մեզ հրամայեալ
387բ Զոր եւ սովիմք կոչիմք հօրէն լուսոյ ծընեալ.
Զոր հաւապով մեկըրտեսցի սովիմք օծեալ
Կեցցէ ի յիս եւ ոչ լինի դատապարտեալ:

84. Լրացե՛ անձն ամենեցուն ջրովըն մարբեալ
Եւ յանուն տեսողն Յիսուսի մեղաց սրբեալ.
Յայնժամ իւղոյս հոգոյն լինի անտեցեալ
Եւ յամենայնէ տըրտմութեանց լինի զերծեալ:

85. Եւ մեկըրտիլ ընդ ներքինոյն զգիտ(?) ըզգեցեալ
Ա՛րկ, տէր, նոյն շնորհ ի իւղըս այս հրաշացեալ.
Եւ որք յանուն քո ընթանան առ իշս օծեալ,
Վերածեսցես առ քո՝ ըզկեանըս կըրկընեալ:

86. Եւ ի թաղումնըն Բրիստոսի սովաւ կրեցեալ
Զի Յիսուսի ի մեղաց լինիմք յորսացեալ.
Որ միսանգամ այս ծընընդեամբ(?) եղաք զերծեալ
Եւ շնորհօք սրբոյ իւղոյս մոր մոր ոգեալ:

87. Այն ի դնել ձեռն Պօղոսի հոգին եկեալ
Եւ ըզնոսին հոգովըն իշս հրաշագարդեալ.
Արա՛ նոյն շնորհ հոգոյն սրբոյ ի իշս եկեալ,
Եւ սրբեսցես զամենեսին առ հասարակ զըրարացեալ:

88. Ծընծալի իրս վասըն իւղիս մեզ քարոզեալ
Ի սըմանէ զօծեալք զԲրիստոս լինի զգեցեալք
Ամենայն ազգք որք հաւատով² ի սա՝ նթացեալ
Լինին վերնոյն հօրէն լուսոյ զաւակ զըրեալ:

¹ Ձեռ. դրված է սովորական ձևով՝ իւղովս, բայց պետք է, որ սկզբնագրում անպայման գրված լինի՝ փուղովս, որովհետև այդ է թելադրում ոտանավորի տնագլուխ տառերի համադրական ընթերցումը: Այստեղ առ հարկի դրված սկզբնատառ ւ-ի վերացումը՝ ընդօրինակող գրչի կողմից կատարված ակնհայտ խախտում է: Հմմտ. նաև 90-րդ տան մեջ գտնվող փանդացեալ բառը:

² Ձեռ. վստով:

89. Այն եւ լինի ի մի մարմին սովիմբ կըցեալ
Ամենեքեան որք ի Քրիստոս հաւատացեալ.
Եւ մեք անդամք՝ Քրիստոս առ մեզ գըլուխ ցուցեալ
Եւ հաւատով զեկեղեցիս մեր է կանգնեալ:

90. Ի հաւանդացեալ¹ գործով մեղաց զայս դեղ առեալ²
Որք զըղջացի[ն] եւ յերիցանց լինին օծեալ,
Տըկարացեալ հոգոց զայս միւթ ըսպեղանեալ
Ողորմութեան իւղովն լինին առողջացեալ:

91. Այս նորահրաշ քաղցրագեղուն դեղ մեզ ցուցեալ
Իմանալի զէն երկապրի մեզ պարգեւեալ.
Սովիմբ զարթո՛ միտըս մեր բութ յեսան³ սըրեալ,
Զի լինիցիմք⁴ առ յօրինակըդ քո զգեցեալ:

92. Որ ոք ունիցի զկնիքըս զայս կարիցէ կեալ
Որ ի տեսունէ եւ Յիսուսէ մեզ աւանդեալ.
Զեկեղեցիս եւ զհաւատս մեր սովիմբ կընքեալ,
Եւ զաւազան մըկըրտութեան այսու կըցեալ:

93. Այլ եւ վեհից վարդապետաց գըլուխ օծեալ
Եւ ըզտուաւ եղեն զհոգին սուրբ ըզգեցեալ,
Եւ յիշխանաց⁵ յարեմըտից սա պարըսպեալ,
Եւ ամենայն քրիստոնէից սա աւանդեալ:

94. Յանուն տեսալն եղև նըրագս զայս շարադրեալ
Եւ ի խընդրոյ Յովսէփ պետին երանեցեալ.
Հազար հարիւր եօթանասուն ութ թին երգեալ
Ի յումեմնէ մեղսասիրէ տառապեցեալ:

Հրատարակեց՝ Է. Ս. ԱՆԱՍՅԱՆ

¹ Զեո. այսպես է (ոչ հիւանդացեալ):

² Զեո. կարդացվում է՝ դեղ որեալ կամ սրեալ:

³ Զեո. յեսամ:

⁴ Զեո. զինիցիմք:

⁵ Զեո. յիշխանաց:

